

ԱՆՈՐԱՆԻ ԹԵՐԶԱՆ

Արհեստ



ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ

891.99

12470

P-52

Примеч., 12.

Упл. 12.1

ԱՆԴՐԱՆԻԿ ԹԵՐԶՅԱՆ

891.99

Բ-52

ՍՏԱԿԳԼԱՍ Է 1961 թ.

ԱՐԵՎԵԼՔ

1.
A 5468 ~~12420~~



ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՎ

Ե Ր Ե Վ Ա Ն

1948

А. ТЕРЗЯН

ВОСТОК

(На армянском языке)

Советский писатель,

Ереван, 1948

Հ Ո Ղ Ը

Ա.

Այս իրիկուն
 Երբ անձրևի օրորումեն վերջ նորեն
 Վաճի արգա՛նդը հողին արեաշող բուրմունքով,
 Երբ ամեն գոց պատուհան
 Թևերն իր լա՛յն կբանա տիեզերքին դեմ ամբողջ,
 Երբ մայթերուն դեմ հաճախ
 Կփշրի խի՛նդը ցրնոր աղջիկներո՛ւն ռսկեվարս,
 Արևելքի քաղա՛քն այս մեծ
 Հանճարանի՛ստ իր բերդով,
 Նո՛ր տենդերու, կարոտներո՛ւ մեջ այրող
 Ու լայնաբաց ալիքներո՛ւ մեջ նետված
 Ծփացող նա՛վ մ'է կարծես:

Բ.

Արնաժարավ ու վերջին պայքարի դա՛րն է այսօր,
 Լղեղաձիգ ձեռքերու վերջին հարվա՛ծն է այսօր,
 Պետք է մոռնալ ամե՛ն սեր,
 Լքել ամե՛ն նահանջի
 Ու հեշտանքի ամե՛ն հարկ,

Հարյուրներո՛վ,
 Հազարներո՛վ,
 Միլիոններո՛վ,
 Մորկասո՞ւյր արշավել,
 Քանդե՛լ, այրե՛լ սայթաքումի ամեն թումր,
 Եվ, համառորեն, ո՛ւժգնորեն
 Բախիլ, փշրիլ ճակատագրի՜ ժայռերուն,
 Բանալ սրտի, հուլզի ամե՛ն փոթորիկ,
 Եվ ջիղերու խենթ պրկումո՛վը վերջին
 Նետվի՛լ, հասնի՛լ
 Լուսապայծա՞ռ բարձրությանց:

Գ.

Ե՛ս եմ արդ
 Որպես ընկե՛ր, որպես եղբայր
 Պայքարներուն կյա՛նք տվող
 Քսա՛ներորդ այս դարուն՝
 Ահա հոգիս կնետեմ վաղվան բոլո՛ր օրերու
 Ահազնամե՛ծ գնացքին,
 Ուր, Արեծագեն Արևմուտք
 Պիտի ամեն կյանք դառնա աշխատանքի զնդո՛ւն երգ,
 Ամեն շարժում՝ բեղուն երթ,
 Ամեն երգիկ՝ սիրո՞ղ սիրտ...:

Օ՛, ի՛նչ հրճվանք...

Աչքերս թա՛ց են հիմա եղբայրական աղջունքով,

Շրթներս տա՛ր ու ալրող.

— Կարծես թե նո՛ր եմ սիրած—

Հողն այս խոնավ

Թորերուս մեջ հաշիշ, բուրո՛ւմ է նարեն,

Ջիղերուս մեջ սարսուռ ու զարկ,

Ու արյունիս, տենչերուս

Վերադարձող սե՛ր մը հին...

Այս իրիկուն ես կուզեմ

Ճամփաներու վրա մութ, փողոցներու մեջ տամուկ

Ճշալ իմ սե՛րըս ժարդկանց,

Նոր գտնված սե՛րըս այս բաշխել ու տալ բոլորին...

— Կարծես թե նո՛ր եմ սիրած—

Ե.

Ու ե՛ս եմ արդ՛

— Հողին վրա աճող երա՛զ մը հարուստ—

Կանցնիմ հպարտ Արևելքի գաղջ գիշերվան ընդմեջեն,

Ի՛նչ փուլթ սակայն

Թե բարձրաբերձ շենքե՛րն այս

Դղրդումով մը հանկարծ

Կրնան փլչի՛լ ուսերուս,
Կամ թե մեռնիլ ամե՛ն երգ,
Ու մոխրանալ ամե՛ն լույս,
Երբ թևերուս մեջ վտիտ ես կտանիմ ինձի հետ
Հին աշխա՛րհ մը արյունոտ
Դեպի բացվող Մե՛ծ վաղվան...:

Հալեպ, 1946.

Ե Ր Զ Ա Ն Կ Ա Ն Ի Թ Յ Ո Ւ Ն

Երջանկությո՛ւն, վերջապէս կրցա խլե՛լ թեզ կյանքեն,
 Այս գիշեր երբ հարսնիք է ամեն բարի ու հարկի,
 Ու պահել թեզ որպեսզի ոչ մեկ սարսուռ, ոչ մեկ քեն
 Գան խռովել սերերուդ անդորրությո՛ւնը գաղտնի:

Հուսերու զոլ անձրեկն մեջ ծփացող մայթերեն
 Կանցնինք այսպէս միասին բայլերով մեղմ իբր ստվեր.
 — Աչքերդ փակ՝ ննջե՛ դուն, ու կուզեմ որ չտեսնեն
 Թե ես ու դուն այս գիշեր իրար գտնե՛լ ենք կրցեր...

Երջանկությո՛ւն, բայց գիտե՛ս կան քանիննր ձյունագես,
 Աչքերնուն մա՛հ ու արցունք, որոնք հիմա կդողան
 Արյունաբորբ դեռ գալիք Արեգակի՛ն դեմ վաղվան...

Կուզեմ թեզ տալ մաս առ մաս աղքատներու սեղանին,
 Տալ սիրահար ո՛րք տղոց ու գեթ մասունքն ալ հետին
 Քայլերուս հետ ընթացող դնել Մահվան գո՛րշ ափին:

Հալեպ, 1945.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Մոխիրներեն դուն հառնող, ով մեծ ծնունդ վահագնի...
Որ ձգտումով մը ուժգին ու խոյանքով մ'աննահանջ
Կբարձրանաս ներկային ու գալիքին դեմ փառքի
Որպես տեսիլ մը շքեղ ու տիտանյան ահեղ կանչ:

Հիմա այնտեղ ամեն տուն սիրող սի՛րտ է լայնաբաց
Ու օրհնությո՛ւն է համակ իջնող արևը անգամ,
Ամեն շարժում խնդուն կյանք, ամեն ծիծաղ սեր ու հաց,
Մահը ծնունդ մըն է նոր, կյանքը՝ շընորհ հավիտյան:

Կբարձրանաս... ու քեզի հետ ժողովուրդ մը ամբողջ
Անհարազատ, ասիերու դժնեւտեսիլ՝ խորերեն
Կբերե սի՛րտն իր խոցոտ՝ որպես ընծա մը բողբոջ,
Ու անոր հետ դեռ հյուծող կարոտն ու ո՛ղբը անզեն:

Պիտի դառնան—Ով Մնունդ—քու որդիներդ հայնժամ
Ստվերներու պես լայնցող՝ միանալու քու կանչին,
Ու Տեր-Ջորի մեջ թաղված հայ աճյունները անգամ
Հարավ հողմեն քշվելով պիտի հողի՛ր մեջ հանգչին...

Մոխիրներեն դուն հառնող, ով մեծ ծնունդ վահագնի:
Հալեպ, 1945.

ՄՈՒԹՐ ԻԶԱՄ Է ԱՐԴԵՆ...

Մութը իջած է արդեն սա դիմացի տուներուն...
Տուներ՝ գրկած իրար պինդ սրտեղու պես սիրահար,
Որոնք տենդո՛վ մը անվերջ կհամբուրվին դադտնաբար,
Կփսփան համրորեն բառեր անձայն ու թաքուն:

Տուներ՝ կարծես կծփան խավարին մեջ անհատակ,
Կըլլան բացվող առագաստ՝ կպարզվին հրկնքին,
Կըլլան ձեռքե՛ր խլրտուն՝ աղոթելո՛ւ կշարժին
Անտառներու պես մթին, կույսերու պես գլխահակ...

Մինչ կբալեմ ես հողնած՝ կիսամութի այս պահուն,
Ուր խենթ ձայներ կմեռնին, ծառերը մե՛ղմ կշնչեն,
Ու սրտիս մեջ քաղցրությամբ կիջնե խռո՛վը մը անհուն:

Գիշերն ըրած բեռ մը մեծ իմ ուանդու հոգնատանջ,
Ստվերիս հետ առանձին՝ կանցնիմ սա թաց մայթերեն
Տանըն կանչի՛ն մայրական լարած սիրալս ու ականջ...

Մութը իջած է արդեն սա դիմացի տուներուն...:

Հալեպ, 1945.

Մ Ո Ս Կ Վ Ա

Աշխարհի սի'րտն է քո մեջ տրոփում,
 Աշխարհի տենդին հարազատ ընկեր,
 Լսիր, քո զս'րկն է հնչում երկաթե,
 Այս որքան դղիրդ, ու կանչ ու երգե՛ր,
 Որքան ամառվա ադն՝ ու հրդեհ...
 Աշխարհի սի'րտն է քո մեջ տրոփում:

Դու առաջին երթ՝ բացվեցիր հանկարծ,
 Երբ լո՛ւյսն էր մեռել սրերի ահից,
 Գանգերում մարդոց դարձար դադափար,
 Դարձար ղեկավար, ձա՛յն տվիր նորից,
 Տարիր մեզ քեզ հետ պայքարի՛ն արդար...
 Դու առաջին երթ՝ բացվեցիր հանկարծ:

Մեր Նաիրի՛ն է քեզ նայում հպարտ,
 Դու տվիր նրան և շո՛ւնչ և մարմի՛ն,
 Որ նա բարձրանա, հասնի՛ այս դարուն,
 Շրթներին ժպիտ նայի՝ Մասիսին,
 Ու օր մ'էլ նա մեզ կանչի՛ դեպի տուն...
 Մեր Նաիրի՛ն է քեզ նայում հպարտ:

Օրհնե՛րգ քեզ, քաղաք, հույզերի՛ օվկիան,
Միշտ արթուն լինես, լինես իմաստուն,
Որ հոգիներին չիջնի երեկո.
Իմ գրչին էլ դու տուր մտքե՛ր խոհուն,
Որ ես քե՛զ երգեմ, երգեմ խի՛նդը քո...
Օրհնե՛րգ քեզ, քաղաք, հույզերի՛ օվկիան:

Հալեպ, 1946.

Ձ Ե Ռ Ք Ե Ր

Ես ճանչցա ձեզ իջար երբոր
 Խանձարուրեն դեպի փողոց՝
 Ձեր մեջ գրկած աշխատհ մը նոր,
 Ու սուրացիր անոր մեջեն
 Հովերուն դեմ ե'րգ երգելեն:

Ձեռքե'ր, փոշու, խաղի' ձեռքեր:

Հետո մեծցար, թուղթի վըրա
 Ժպտի, վարսի ե'րգ հյուանցիք,
 Դուրգուրացիք որ ան մնա
 Որպես ավանդ ամեն մարդու,
 Ու դուք գացիք սե'ր փնտրելու:

Ձեռքե'ր, սիրո, երա՛ղ ձեռքեր:

Եղար անտեր ու մոլորուն,
 Չսիրեցիք լո'ւյսը անգամ.
 Ելաք այցի գիշերներուն...
 Ճանչցաք գինի, հեշտանք, ամո'թ,
 Եղանք իրար մեներ անծանոթ:
 Ձեռքե'ր, խաբված, մեղքի' ձեռքեր:

Ծա կնայի՛մ ձեզի հիմա.
Հրաժեշտի պա՛հն է կարծես,
Կիյնա արցունք մը ձեր վըրա...
Ու կմեծնա՛ր, կբաղմանաք,
Կըլլաք մեկնող անհո՛ւն բանակ:

Ձեռքե՛ր, տենդի, կովի՛ ձեռքեր:

Հալեպ, 1946.

ԱՆՁՐԵՎ, ԱՆՁՐԵՎ...

Քննուշ ու մշոշ աղջկան

Անձրե՛ւ, անձրե՛ւ քաղցրահեծ,
Կաթիլներով լույսի պես,
Նվազի պես դողդուջուն,
Կիջնես խաղա՛ղ արտերուն:

Անձրե՛ւ, անձրե՛ւ բարության,
Առաքաստի մը նման
Կպարզվի՛ս զվարթուն
Անպարագիծ դաշտերուն:

Անձրե՛ւ, անձրե՛ւ սրսփուն,
Կըլլաս երանգ, կըլլաս գույն,
Կըլլաս մարմին և արյուն
Արշալույսի՛ հասկերուն:

Անձրեին տակ իրիկվան
Սիրո կարոտ սա տղան
Կուրծքն՝ իր բացած հովերուն՝
Ծնրադիր սի՛րտ մ'է փխրուն...

— Անձրե՛, անձրե՛ բարեգութ,
Կայլահ մ'անձրե կաթեցուր
Սիրող տղո՛ւն շրթներուն...:

Հալեպ, 1944.

Զ Յ Ո Ւ Ն

Դրսում ձյո՞ւնն է, ձյունն է հանդարտ մաղվում...
 Զինք աստղերի կույս հոգին է ասես,
 Որ գգվանքով, օրորում' զգեղուն
 Տարածվում է երկրի վրա այնպե՛ս:

Կամ թե անցած իմ օրերս են քնքուշ
 Եվ սերերս են, հույզերս անմեղ, տրտում,
 Որ այս գիշեր որպես բա՛ղցր վերհուշ
 Իջնում են իմ և բոլորի՛ սրտում:

Հեռվից հնչում, թախծում է մի նվագ
 Եվ խորանում որպես երկար հառաչ.
 Կարծես սի՛րտս է որ դողում է մենակ
 Բոլոր, բոլոր հին հուշերի առաջ:

Իջե՛ք, սերեր, ինչպես ձյո՞ւնն է իջնում, 2
 Օ՛, կաղանդի ցուրտ գիշերով իջե՛ք,
 Լցրեք աշխարհ խաղաղությա՛մբ անհուն,
 Որ այս գիշեր վիշտ չլինի՛ երբեք:

Թող ամեն տուն, ամեն երգիկ բանա
Սի'րտը իրա մի ձնծաղիկ որպես,
Ամեն ժպիտ բեղուն կարկաչ դառնա
Որ միշտ զուլալ հոսի, հոսի հավերժ:

Դրսում ձյունն է, ձյունն է հանդարտ մաղվում,
Հին օրերի մանուկ սի'րտս է ասես,
Որ գգվանքով, օրորումո՛վ զեղուն
Տարածվում է երկրի վերա այնպես...

Հալեալ, 1946.

A 5468
124125



ՀՐԱԺԵՇՏ՝ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԵՆՆԵ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ

Դուսը բացիր. մատներուդ
Տակ դողաց սի՛րտդ՝ հանկարծ...
Պարտեզին մեջ լո՛ւյս ու մութ
Շփոթեցա՛ր դուն, տղաս:
Նայեցար մոտ ու հեռու.
— Ո՞վ է մանչուկն այս օտար—
Ու ժպտեցա՛ր իրարու
Որպես զույգե՛ր սիրահար:
— Նկուր ծաղկո՛ւմ դուն խաղա—
Ըսավ մանչուկը ժպտուն.
Ծիծաղեցա՛ր ակամա,
Ու տխրեցա՛ր հետո դուն:
— Վաղը կոխի՛ւմ կա, ընկեր
Պետք է մեկնիլ անվարան,
Դեռ հոգիներ կան անտեր,
Դուն բնացի՛ր հավիտյան:
Ըսիր, կեցար միասին,
Զեր շրթներուն՝ հո՛ւյզ ու դող,
Համբուրվեցա՛ր սրտագին,
Բաժնվեցա՛ր արցունքով:
Հալեալ, 1945.

ՎԵՐՋԻՆ ՍԵՐ

Թաղե սիրտդ հոս, երգերո՛վ անցիր,
Թաղե սերդ հոս, վերքերո՛վ անցիր:

Դուն զիս գգվեցիր խինդի՜ թևերով,
Դուն զիս սիրեցիր խենթի՜ թևերով:

Մարդիկը բոլոր ես մոռցա՜ հավիտ
Ու դարձա տրտում, հիվանդո՛ւտ պոեմ:

Աշունը երգես դեղնեցա՜վ կարծես,
Եվ աստղեր արցունք առին աչքերես:

Ես կերթամ հիմա քայլերով համառ,
Կերթամ զոհվելու պայքարի՛ն համար:

Թաղե սիրտդ հոս, խաղերո՛վ անցիր,
Թաղե սերդ հոս, դարերո՛վ անցիր:

Դամասկոս, 1945.

ՄԵՌՆՈՂ ԵՂԱՆԱԿ

Հընամաշ փողոցի՝ անկյունեն
Իր հիվանդ թավալքին հետ մինակ
Արյունոդ ու այրո՞ղ եղանակ:

Կտեսնեմ ես ահա հին տղան,
Որ կանցներ երերուն իբր ստվեր՝
Աչքերուն ու սրտին խաբված սեր:

Ե՛ս եմ արդ օրորուն այդ տղան
Թողլքած հեշտանքի ամեն հարկ,
Ջիղերուս մեջ հիմա տե՛նդ ու զարկ:

Կլսեմ գիշերվան այս պահուն
Վաղվան մեծ նվագին կշռույթով
Բաբախող սրտերուն խի՛նդը ծով:

Կխղճամ ես քեզի, եղանա՛կ,
Որ քիչ ետք կարոտիդ մեջ անհաս՝
Պիտի դուն կորսվի՛ս, մահանաս:

Հընամաշ փողոցի՝ անկյունեն
Իր հիվանդ թավալքին հետ մինակ
Կորսվող ու մեռնո՞ղ եղանակ:
Հալեպ, 1945.

ԱՆԾԱՆՈԹ ԳԻՆՈՎԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Ճամփու եզերքին դուն ինկա՛ր այսպես
Աչքերուդ մշուշ, ծունկերուդ՝ կապար,
Ու արևելյան հին երգ մը կարծես
Քեզ օրո՛ր երգեց քնանա՛ս երկար...

Անծանոթ ձեռքեր արդյոք ո՞ւր տարին
Մարմինդ հոգնած, ու միտքդ մոլոր.
Դեպի դրախտի երազվա՛ծ յարին,
Թե հին օրերուդ երդիկին անդորր:

Մեր դարու երթեն դուն ինկա՛ր այսպիս,
Երբ կյանքը ամբողջ ջիղերուդ տե՛նդ էր...
Ու հասակիդ դեմ այս գիշեր թող ես
Լամ բեզի՛ համար, կորսվա՛ծ ընկեր...:

Հալեպ, 1946.

Օրերու այս դահավեժ թափալումին մեջեն խենթ
 Եւ չճանչցա բեղմն զատ ոչ մեկ ցընորբ ու երազ,
 Որ կարենա արեւուն տակ ունենալ զա՛րկ ու տենդ,
 Շնչիլ բոլո՛ր մարդոց հետ, դառնալ խորհո՛ւրդն հանապազ:

Եւ անցա մութ հարկերեն անարգված սերերու,
 Կորսնցուցի՜ իմ հոգիս խնջույքին մեջ հեշտագին,
 Մոռցա աղմուկն օրերուն, մոռցա աշխարհ մը հեռու՝
 Որ կյանքերո՛վը մարդոց կուտար նոր ե՛րթ մը կյանքին:

Շրթունքներու ծանրացավ համբույրի մե՛ղքը տամուկ,
 Մատվրններու պղծումի իջավ աշրուցքը անվերջ,
 Ու քալեցի համրորեն փողոցներն անաղմուկ՝
 Որպես արցունք ու զլջում լացավ մանո՛ւկ մը իմ մեջ:

Եւ ուղեցի խավարին ըլլալ եղբա՛յր հաշտադատ,
 Թողուլ երգիկ ու ընկեր, երթալ ափե՛ր անծանոթ,
 Նայվածքներեն մարդերուն պահել վե՛րքն իմ ձեռադատ,
 Եվ վերջնապես անարցունք թաղել կյա՛նքս փոթորկոտ:

Երակներու մէջ հանկարծ դալարիւնցալ ճի՛շ ու ցալ,
Շրթունքներու հուզիւնցալ ծով մը ամբողջ հուշ ու դող,
Չայն մը խորունկ մայր հողէն առձագանդեց, լայնացալ,
Փշրվեցա՛ւ ան իմ մէջ սիրո կաշւի՛ն պէս այրող:

— Դարձիւ, դարձի՛ր, խենթ տղա, ամերն օտար բեզի ի՛նչ,
Հոս կան ձեռքեր բյուրավոր, դեռ կա կռի՛ւլ և՛ արյուն,
Իմ կուրծքիս դեմ դուն եկուր գտնել հանգիստ, սե՛ր ու նինջ՝
Մենք անթի՛ւ ենք կովի մէջ, մենք ծանո՛թ ենք ամենուն:

...Ու հիմա ալ հնազանդ ես կբալն՛մ բեզի հետ,
Կղգամ հաճախ քայլերու մէջ քայլերուդ հե՛րը տար
Մենք կմեծնանք իրարմով, կըլլանք անհուն ու անհետ
Ու ս՛: Երբք մեզ հետ կըլլա շարժում բովանդակ:

Գիշերներու դեմ բացվող դուն խորհո՛ւրդն ես խորիմաստ,
Առագաստի գիշերվան խաղաղության շափ անեղծ,
Ես կպաշտեմ բեզ հիմա նոր դարու իբր նո՛ր աստված,
Քու հրդեհեզ շունչ առնող ես սրտերի՛ բանաստեղծ:

Հալեալ, 1945.

ԲԵՌՆԱԿԻՐԻ ՄԱՆԸ

Ուսերիդ վրա շիրմաքա՛ր դարձավ
 Բեռը սնտուկի, երբ ընկա՛ր հանկարծ
 Փոշոտ փոշոցում մի երեկո գաղջ,
 Զանգերի ղույանջն երբ հունշ էր ու լաց,
 Թոքերիդ մեջ խինդ ու զարկ ու կարկաշ.
 Ուսերիդ վրա շիրմաքա՛ր դարձավ...

Հողը չդողա՛ց բո ոտների տակ,
 Քո վերջին շնչից չբուրե՛ց երբեք.
 Ականջներդ մեջ չընկավ ոչ մի ձայն,
 Քո ճակտից դալուկ չանցավ ոչ մի ձեռք,
 Զգգվեց հոգիդ սիրով մայրական.
 Հողը չդողա՛ց բո ոտների տակ...

Երեկոն խաղաղ մեռնում էր քեզ հետ՝
 Հեռվում բարձրացող լեռնե՛ր մանիշակ,
 Գյուղեր ծնկաշոք ուղտերի՛ նման,
 Հեռվում հորովել, արո՛ր ու մշակ,
 Հեռվում կերտվող նոր կյա՛նքը վաղվան,
 Երեկոն խաղաղ մեռնում էր քեզ հետ...

Բեռը ուսերիդ դու մեռա՞ր այսպես...
Գուցե բիշ անդին երդիկ ու ցընորբ,
Զավկի ճիշ, ծընողը, սպասո՞ւմ ու կի՛ն.
Կամ թե մենություն և գուցե ո՛չ ոք...
Մեռնող ֆելլա՛հին փողո՞ցն անկողին,
Բեռը ուսերիդ դու մեռա՞ր այսպես...:

Հալեպ, 1945.

ԵՒ ԱՐՄԱՐ ՏՂԱՅԻ ՀԱՄԱՐ

Ամառ էր, կեսօր,
Երբ սևամորթի գնդակը կապար
Դաժան, խոլաբար
Ջարկվե՛ց բո կրծքին առաջին անգամ,
Առաջի՛ն հերոս...
Ու ընկար գետին ամրան փոշու մեջ:

Տե՛սար դու արդյոք արյունը կարմիր
Քո կրծքից հոսող,
Դու տեսա՞ր բոլոր բո ընկերներին՝
Չեղներին դրոշ
Քո արնո՛վ ներկված
Երբ որ խոյացան թշնամու առաջ
Որպես խենթ շառաչ:

Ու տեսա՞ր դու այդ նույն սևամորթին,
Որ մի բիշ անդին
Քեզ պես փոշու մեջ
Փռվել էր մենակ, խռկում էր, խռկում,
Թևերը անդոր նա թա՛փ էր տալիս

Ուզում էր ասես ձեռներով, ոտքով
Շիրի՛մն իր անդել ու ննչե՛լ հանգիստ...
Արյունը անվերջ մազերից, ճակտից
Հոսում էր, հոսում...

Ու մեռնում էր նա.
Չտեսա՛ր նրան...:
Դու չսեցիր զա՛րկը զենքերի,
Փախուստը անդարձ դաժան թշնամու:
Շաշող դռների աղմուկը ահի:

Ամառ էր, կեսօր:

Ամառ է, կեսօր.

Նույն փողոցն ահա
Հուզվում է, հորդում անհե՛ղ կանչերով,
Անցնում են հսկա թափորնե՛ր խնդուն,
Անցնում է և բո պատկերը խոհուն.
Աչքերդ բարի նայում են երկար
Այնտեղ, ուր ընկար...
Եվ նրանք կարճես ժպտում, ծիծաղում
Քո բախտի՛ համար:

Ամառ է, կեսօր:

Հալեպ, 1946.

ԴԱԳԱՂԱԿԻՐ ՖԵԼԼԱՀԻ ՄԱՍԻՆ

Անապատից է եկել
Ֆելլահ Մահմուդը,
Որքան դադաղ որ տանի
Ի՞նչ է օգուտը:

Զի՛ կշտանում փորը մեծ
Հսկա ֆելլահին,
Եվ հենց դրա համար նա
Քֆրում ալլահին:

Դադաղակիր է մեր ծեր
Ֆելլահ Մահմուդը,
Բոլորն ասում են նրան,
Բայց նա անփույթ է:

Զի՛ վախենում նա մահից,
Ոչ էլ դադաղից,
Միայն դադաղ տանելիս
Մտածում այսպես:

«Ունենայի իմ մահիւ
էժան մի դագաղ,
Բաժանվի աշխարհից
Սրտով գոհ, խաղաղ»:

Եվ մի անգամ ասում են
Դագաղ տանելիս
Ընկել է նա ու մեռել
Դագաղի կողքին:

Ու դրել են ֆելլահին
Դագաղում այդ թանկ
Եվ հանձնել են ալլահին
Որ հատուցի պարտը:

Այսպես խաղաղ է եղել
Բաժանման օրը,
Բայց ա՛խ, սոված է եղել
Ֆելլահի փորը:

Հալեպ, 1946.

Մ Ո Ւ Ր Ա Յ Ի Կ

Ֆաթիմա,

Տասնըֆինգ տարու

Մուրացի՛կ՝ աղջիկ...

Ֆաթիմա,

Անժանոթ դռների, դամբերի առաջ

Հիվանդի՛ր ձայնով

Կանչում ես, պաղատում

— Ալլա՛հ, ալլա՛հ...

Ֆաթիմա,

Շորերդ արդեն հնացել են

Ու պատուել

Եվ կուրծքդ ճերմակ

Մի քիչ երևում...

Ա՛խ, շե՛ս տեսնում սա դիմացի Ալուն՝

Սրիկա՛ տղուն՝

Որ կանգնած անդին

Շամբռտ, ալլանդակ մի ե՛րգ է սուլում

Ու նայում է քե՛զ.

Շրթներից նրա լորձո՛ւնք է ծորում...

Ֆաթի՛մա,

Ու հիմա

Շտապում ես ու փախչում...

Մի խուլ ոտնաձայն լսվեց ակամջիդ.

— Ալի՛ն է արդյոք—

Օ՛, նա չի՛, նա չի՛...

Նորից հեալով

Շտապում ես ու փախչում...

Ֆաթի՛մա,

Այսպես փողոցներ ըո ոտների տակ

Դողում են կարծես,

Թո պա՛րկը հացի,

(Ճակատագրի բե՛ռ)

Ծանրանում է ըո վտիտ ուսերից....

Ուզում ես հիմա մի վայրկյան առաջ

Նետել մարմինդ այս

Հարդե քարացած անկողնի՛ վրա:

Ֆաթի՛մա,

Տասնըհինգ տարու

Մուրացի՛կ աղջիկ,

Դու գիտե՞ս արդյոք, որ Արևելքում

Հեռու այս հրկրից

Աղջիկնե՛ր կան բյուր,

Կոշվում են նրանք

Լեյլա, Ֆաթիմա, Զոյա ու Սոֆա...

Նրա՞նք,

Նրանք մեր կյանքի քայլերին պողպատ

Նոր թա՛փ են տվել:

Ֆաթի՛մա,

Տասնըհինգ տարու

Մուրացի՛կ աղջիկ:

Հալեպ, 1946.

ՄԵՐ ԴԱՇՏԵՐՈՒՄ

Դեղձա՛ն հասկեր
Օրորվում են ու օրորվում
Դանդա՛ղ, տրտում,
Մերթ ծվում են ու մերթ խայտում
Հղի՛ արտում:

Դեղձա՛ն հասկեր
“Ալիքների՛” պես նազանքով,
Իրարո՛ւ ըով
Փշրվում են ու աղմբկում
Ծովի՛ արտում:

Դեղձա՛ն հասկեր
Խորհրդային ազատ կյանքի,
Աշխատանքի
Գովքն են անում ու հ՛րգն երգում
Մեր դաշտերում:
Դամասկոս, 1945.

Յ Ա Լ Ե Յ Լ Ի

Ա.

Թուխ աչքերով մի ֆելլահ
Տեղավորվել է հանդարտ մի անկյունում վագոնի,
Ծխում անվերջ՝ հեշտանքով,
Հաճախ նայում է չորս դին...
Ու քնացել են արդեն հարևանները բոլոր,
Դուրսը գիշեր է խաղաղ, ոչ մեկ աղմուկ, ոչ մեկ ձայն:
Միայն գնացքն է այսպես խենթի՝ նման շտապում.
Եվ ֆելլահի հոգու մեջ
Մի անծանոթ սև՝ թախիծ
Փոթորկում է ու լալիս:
Վագոնը հիմա մարդերով լցված
Անվերջ օրորվող
Դադաղ է ասես...

Ահա հանկարծ մի երկար,
Մի թախծանո՞ւյշ եղանակ
Պրպես օրո՞ր, սփոփանք
Դլգլում է ու հորդում թուխ ֆելլահի շրթներից.

— Յալե՛լի, յալե՛լի հո՛վ գիշեր,
Յալե՛լի, յալե՛լի զո՛վ գիշեր...

Թող մտրակի, թող շաշի շողեկառին երթը խոլ,
Երկինքը թող ճեղքովի, իյնա երկրի՝ ուսերին,
Թող կայծակներ շեղբովեն, այրեն երկի՛րը ամբողջ
Եվ հողմերը թող փռին տանեն, ցրվեն աշխարհին:

— Է՛, ի՛նչ է կյանքն այս երկրում—
Խորհում է ֆելահը հիմի,
Եթե ոչ մի յալեյլի...

Ու ա՛յն մարդ որ աշխարհ գալիս ապրում է, սէրում,
Ինքնիրեն է հնարում ելե՛ջներն այդ երգի
Մի տեղ երկար հառաչանք,
Մի տեղ ժպի՛տ ու խայտանք...

— Յալե՛լի, յալե՛լի հո՛վ գիշեր,
Յալե՛լի, յալե՛լի զո՛վ գիշեր...

Բ.

Ֆելահը տեսնում է տունն հեռավոր.
Գիշեր է իջել. լուսթյուն ու սեր.
Նա նստել կողքին իր խառիչեին
Նույն մեղկ շեշտերով նույն ե՛րգն է երգում:

— Յալե՛լի, յալե՛լի հո՛ւ վ գիշեր,
Յալե՛լի, յալե՛լի գո՛ւ վ գիշեր...

Ուղտը նազանքով գլուխն օրորում
Անապատի ծեր խորհուրդի դիմաց,
Ասողերը վերից անո՛ւշ արտասվում,
Արմավենիներ հառաչո՛ւմ անլաց:

Խատիջեն երկար նայում է նրան,
Որ նա դեռ երեկ մի խենթ պատանի
Սչքերում կրակ, շրթներին՝ հրդեհ
Եկավ մի գիշեր որ նրան տանի
Հեռո՛ւ մի երկիր ծնողրից հեռու,
Ուր սերը հավետ ազատ թե՛ առնի:

Նա հիմի արդեն տարեց է դարձել
Ու ձյուն է իջել նրա բունքերին,
Ու Խատիջի աչքերից վճիտ
Սիրո արցունքն է իջնում շի՛թ-առ շի՛թ:

Ֆելլահը նրան նայում է, տեսնում
Թե իր Խատիջեն մունջ լաց է լինում,
Սեղմում է կրծքին, նորից ու նորից
Համբուրում նրան հաստկեկ շրթներից...

Ավազը դեղին բուրմո՛ւնք է հիմի,
Ողջ անապատում վարդեր են բացվում,

Արմաւներ ծառից ընկնում մի առ մի:
Ծիր կաթինն ահա հուզմունքից դողում,
Ուզում է կարծես լինել մի գոտի
Եվ խառնել տենդահա՛ր մեջքին
Փաթաթվել ուժգին:

Գ.

Գնացրը հանկարծ թռչում է, ֆշշում,
Հեռագրասյուների դողում են, փախչում,
Արգանդը հողին դղրդում սաստիկ.
Սույլը գնացքին ճեղքում է, պատռում
Երկնքին կապար, ժայռերին բրոնզ:
Նա մի ջրվեժ է լեռներից ընկնող,
Կամ թե արշավող մի հուժկո՛ւ բանակ...:

Ֆելլահը կարծես սթափած քնից
Նայում է շորս դին թե ո՛ւր է հասել
Ու հին մտերիմ նույն երգը նորից
Լցնում է մարդկանց սրտերը բոլոր:

— Յալե՛լի, յալե՛լի հո՛վ գիշեր,
Յալե՛լի, յալե՛լի զո՛վ գիշեր...:

Դ.

Դու շե՛ս տեսնում շոգեկառքին
Արշավը խենթ ու գինով,

Դու չե՞ս լսում մեծ գալիքին
Պողպատ զարկերը այսօր:

Քո յալելին մենք ի՞նչ անենք,
Նա հնացած ավա՞նդ է,
Նա չի՛ կարող կուլել երբեք,
Նա մահամերձ հիվա՞նդ է...

Մենք քեզանից ե՛րգ ուզում ենք,
Երգեր հսկա այս դարու,
Որ նա կուլի մարդու դեմ նենգ
Աշխարհում մոտ թե հեռու

Քո երգի մեջ ուզում ենք մենք
Միլիոնների կո՛ւտ հոգին,
Տենդը նրանց ու ե՛րթը սեգ
Ճանապարհից այս կյանքին:

Ե.

Անցել ես դու Արևելքի
Քաղաքներից նոր ու հին,
Տեսել արյունն ամեն վերքի,
Եվ լաց, մորմորը սրտերի:

Ու տեսել ես մանուկներին
Փողոցների անկյունում,

Տեսել հազար սո՛ւր ու շղթա,
Դեմքեր հիվանդ ու տրտում:

Զ.

Չե՞ս լսել երբեք կարավաններից
Թե անապատից հեռո՞ւ աշխարհում
Բազմացեղ մարդիկ բազուկի զարկով
Նոր դա՛ր են կերտում...

Չի՞ խոսել երբեք արյունդ բեղի,
Ջիղերդ երբեք չե՞ն ասել ընկեր,
Թե բազմախորհուրդ օրերումն այս մեր
Չո սիրտը կյանքից մի թել է պոկված,
Էլ նա շունի երգ, շունի ոչ մի սեր,
Թե հարկ է հիմի ունենալ մի սիրտ
Հյուսված արևից, պողպատից, հուրից,
Որ երբ հանդիպի նա ամեն ինչի
Հարկ է պայքարի բորբ երգեր հնչի:

Է.

Օ՛, արդյոք գիտե՞ս, քանիներ կան հիմա
Շրթներին յալելի հուզվում են, սիրում
Հաշիշ ու գինի, աղջիկ սևաչյա...

Օ՛, գուցե անդին անտուն ու անհաց
Քանինե՛ր արդյո՞ք անապատի մեջ
Դողում են, մեռնում աշվըներով թաց:

Ը.

Քո յալեյլին մենք ի՛նչ անենք,

Նա հնացած ավանդ է,

Նա չի՛ կարող կռվել երբեք,

Նա մահամերձ հիվա՛նդ է...

— Յալե՛յլի, յալե՛յլի հո՛վ գիշեր,

Յալե՛յլի, յալե՛յլի զո՛վ գիշեր...

Հալեպ—Դամասկոս ճանապարհին, 1946.

ՇՈՒՐԱ ՉԵԿԱԼԻՆ

Այս գիշեր գինու բո՛ւյսը շրթներիս,
Կրծքիս տակ սիրո անհո՛ւն մի կարոտ,
Ու թևերիս մեջ հրդեհ՛ը կյանքին,
Արևելքի գաղջ գիշերվան միջից
Քաղաքից այս հին
Խինդով, ցընորքով
Ծա քե՛զ հմ կանչում:

— Շուրա Չեկալի՛ն—

Դողում են հիմա իմ քայլերիս տակ
Շրթները խոնավ հիվանդ մայթերի,
Լույսեր ու դեմքեր օ՛, ինձ են կանչում,
Քաղաքը ասես ռազմադաշտ դարձել
Հուզվում է, դողում
Բյուրավոր բազկի պայքարի տենդից...
Անցնում եմ ե՛ս էլ կռվի կարոտով
Շրթներիս վրա այս ե՛րգը հպարտ:

— Շուրա Չեկալի՛ն,

Տասնըվեց տարու

Դու խիզա՛խ տղա,
— Շուրա Չեկալի՛ն,
Տասնըվեց տարու
Պայքարի՛ տղա...

— Շուրա Չեկալի՛ն,
Երգըս քեզ համար թող օրո՛ր լինի,
Շուրա Չեկալի՛ն,
Երգըս քեզ համար թող օրհնե՛րգ լինի...

Քո սվինահար մարմի՛նը, ընկեր,
Հանգիստ հո՛ղ լինի
Հայրենի գյուղում:
Մեր կուլի մեջ դու ռազմե՛րգ ես անհաղթ,
Որի կշռույթով
Մենք հիմա հարբած
Աշխարհնե՛ր բազում
Մարտի՛ ենք կանչում...

Մեր շարքերի մեջ տեսնում ենք մենք քեզ
Ճակատդ պայծառ,
Ու վարսերդ սև հողմերին տված
Թռի՛չք ես առնում
Արաբիստանի սամո՛ւմը ինչպես:

— Շուրա Չեկալի՛ն,
Մարտիկ փոքր եղբայր,
Թշնամու առաջ բո հորըդ կողքին
Դու կուլի՛ ելար...

— Շուրա Չեկալի՛ն,
Դու ի՛նչպես հպարտ՝ անհուն վերքերով
Քայլերիդ մեջ թափ, շրթներիդ՝ հեգնանք
Ամբոխի միջից կախաղա՛ն ելար...
Պարանը բո տեղ ասա՛, լաց չեղա՞վ,
Գերանը հաստկեկ չճշա՞ց երբեք,
Արևը ահից չընկա՞վ ուսերիդ...

— Շուրա Չեկալի՛ն,
Մեր դրոշի պես վառ,
Կարմրասի՛րտ տղա,
Նայեցի՛ր խրոխտ դու վերջին անգամ
Ամբոխին հուզված...
Նրա մեջ տեսար մայրիկդ բարի
Եղբորդ կողքին.
Երկո՛ւան էլ անձայն լաց էին լինում...
Դու տեսա՞ր նրանց,

Կախաղանի մութ սանդղամատից
Դու տեսար վաղվա օրե՛րը զվարթ,
Փլատակների ու ավերների միջից բարձրացող

Քաղաքնե՛ր խնդում,
Բյուր մանուկների խլրտո՞ւմը վառ,
Ու խենթ ու վարար
Տողանցքը բազում քո ընկերների
Ձեռներնին կարմիր պայքարի դրոշմ...

Հալեպ, 1946.

ՔԵՐԹՎԱԾ՝ ՎԱՂՎԱ ՀԱՄԱՐ

Այս գիշեր
Ուզում եմ ես
Իմ երգերի՜ս ալիքներով
Հուզել բոլոր գանգերը ձեր
Ուր որ եք դուք՝
Մոսկվայից մինչև Հալեպ,
Ու Հալեպից մինչև Բոմբեյ,
Ինչ որ լինի՞ր դեղին, կարմիր,
Պղնձագույն, թե սևամորթ,
Ես ուզում եմ
(Իմ եղբայրնե՛ր, իմ ընկերնե՛ր)
Ձեր գանգերի մեջ կուտակված
Բյուր տենդերին, հույզերին
Փոթորիկնե՛ր սերմանել...

Քանի գանգեր դեռ երեկ
Մութ ծալքերից խավարի
Որպես ուսմբեր պայթեցին՝

Նրանց լույսից ու զարկից
Դողաց աշխա՛րհը հիմքից,
Մի նոր աշխա՛րհ կառուցվեց՝

Բազուկներ պիրկ, դեմքեր պողպատ
լեռնացի էն վաղվա համար.
Դեռ կոխ'վ կա արյունահեղ,
Երկու աշխարհ դեմ դիմաց...

Վաղը զա'րկը ձեր գանգերի
Պիտի սարսե հին աշխարհների
Եվ նոր կյանքի, երթի' համար
Պիտի փշրի'ք դուք իբր ական
Եվ սերունդների կյանքով լցված
Պիտի քայլեն շե'շտ քայլերով
Հասնելու Մեծ վաղվա համար:

... Օ՛, սերունդներ արևածին,
Մեզնից ետք երբ աշխարհ գար դուք
Համայնական այս նո'ր երկրում,
Երբոր քայլեր կո'ւտ քայլերով
Մոսկվայի Կարմի'ր Մայթից,
Կամ փողոցից Բեռլինի
Ձեր թորերում տենդե'ր վարար,
Հույզեր՝ լերա'ն հավասար,
Հիշեք պայքա'րն այսօրվա,
Որի համար մա'հ ենք տվել
Հազարներով, միլիոններով
Որ կյանքը ձեր արև՝ լինի
Եվ բռնիներն ամեն մարդու
Լեցվեն, հորդե'ն վառ կյանքով:

Օ՛, սերունդներ հեռավոր,
Սերունդներից ետք բազում,
Երբոր աշխարհ դաք խինդով
Հիշեր ձեզնից շատ առաջ
Եղել է մի ժամանակ
— Քսաներորդ կարմի՛ր դաք —
Որ արյունով է շաղվել,
Հիշեր նաև սերունդներ
Քե պողպատի դարը ձեր
Ու դեռ դարեր գալիքի
Նույն դարից կյա՛նք են առել...

Հալիպ, 1946.

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Եկել ենք մենք օտար ավից երգել ծնունդդ երկրավոր,
Թողած այն խորթ աստղերը կույր—դտանք մեր
աստղը բախտավոր:

Անհրապույր ծաղկանց միջից գտնել մեր վարդը կորուսյալ,
Որ արևին շրթներն իրեն կարողանա նորի՛ց բանալ:

Տվել ենք քեզ ու դեռ տալիս երակների կաթիլը հուսկ,
Պանդխտությունն ինչ որ տվել որպես կարոտ ու արտասուք:

Եկել ենք մենք հիմա անել քո Նաիրյան գո՛վքը կարմիր,
Երկի՛ր, դո՛ւ էլ երգերն այս վառ կրճրիդ վրա ամուր
սեղմիր:



Թող մեր ցամբած երակներին արյան հնչուն կարկաշ լինես,
Սեր անարյուն շրթների վրա դու նորաբաց մի վարդ լինես:

Մանուկներին մեր սեաշյա դու ցնծության խող ճիշ լինես,
Աղջիկներին շուշաներանգ՝ նորաբողբոջ դու սե՛ր լինես:

Այգամարմին մեր հարսներին բաղցրատեսիլ ժպիտ լինես,
Կյանքի սեմից մտնողներին մշտադալար դու բա՛րձ լինես:

Մեր աչքերին ու սրտերին դու ուղեցույց երա՛զ լինես,
Աստվածներից վտարական մեր ցավերին դարմա՛ն լինես:

Քեզնից հեռու ու քե՛զ կարոտ պանդուխտներին օրո՛ր լինես,
Հողի կարոտ մեր ծերերին դու գրկաբաց շիրի՛մ լինես:

Հալեպ, 1945.

ՄԵԿԵՆՈՒՄ՝ ԴԵՊԻ ԱՓԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Բանաստեղծ ընկերոջս՝

Արամ Արմանին

Պիտի հիմա սո՛ւյլն հանկարծ ահագնամեծ այս նավուն
Փշրի՛ ընդդեմ ժայռերուն աղեղսանքով տխրագին,
Եվ թանձրածուխ մոխիրու ու կանչերու մեջ անհուն
Պիտի աշխա՛րհ մը մաքուղջ սուրա, նետվի՛ գալիքին:

Սրտերուն մեջ կլայննա, կփոթորկի՛ տենդ մը նոր,
Եվ մոռցված սե՛ր մը հին—վերջին, վերջի՛ն հիշատակ—
Կհսօրնեբուն մեջ բարի, գիշերներուն մեջ ցընոր
Ապրըված կյա՛նքը անցյալ կըլլա կարո՛տ անհատակ:

— Զկա, չկա՛ մեզ համար ոչ մեկ պատնեշ ու կապանք,
Ոչ մեկ բազուկ արգիլել կրնա մեր երթը գինով,
Երբ մեկնումի այս պահուն կգալարվինք, կդառնանք
Պոռթկումի ճիշ, աղաղակ ու ծովուն դեմ խինդի՛ ծով:

Կայմերեն վար կկախվին կարծես դարե՛րը խավար,
Կարծես սրտերը բոլոր պիտի հավետ ընկղմի՛ն,
Երբ կշարժի նա՛վն ահա ու բազուկնե՛ր անհամար
Կըլլան բոո՛ւնցք ու հարված վաղվան կարմի՛ր պայքարին:

ՊԵՂՈՒՐ, 1946.

ՄԵՐ ՍԻՐՏԸ ՔԵՉ

Մեր սիրտը ահա բերել ենք մենք ընդ՝
Քո զարկի, տենդի, հույզերի համար,
Երազը մեր վառ ձուլել երազիդ,
Որ նա բարձրանա, դառնա՝ երգ ու խինդ,
Լեցնի մեր հոգին լույսերով անմար...
Մեր սիրտը ահա բերել ենք մենք ընդ:

Երեկը մեր հին փշրվե՛ց այսօր,
Ապագան կանգնեց ներկայի առաջ
Որպես հավերժի Մասիսը հպարտ.
Գալիքի կանչով մենք դարձանք անհաղթ,
Էլ չե՛նք ճանաչի ուրիշ ոչ մի կանչ:
Երեկը մեր հին փշրվե՛ց այսօր:

Ողջո՞ւյն ընդ, երկիր, լույս ու արև՝ ընդ,
Երգըս բո ճակտին թող համբույր լինի,
Արևը բո դեմ միշտ պայծառ մնա,
Երգըդ հո՛ւր լինի, և հույզըդ՝ անմահ.
Իմ շունչն ու հոգին գալիք երգերի...
Ողջո՞ւյն, ընդ, երկիր, լույս ու արև՝ ընդ:

Երևան, 1946.

ԻՄ ԹԱՓԱՌԱՅ ԲՈՒՈՐ...

Իմ թափառած բոլոր ուղիների վերա
ծա իմ սի'րտն եմ նետել որպես թերթեր ծաղկի,
Բայց անցորդներ տրտում կոխկրտեցի'ն անահ,
Չնայեցին նույնիսկ, ես երբ ցավից լացի:

Օ, Առաջնորդ կամքի, կյանքի' և հանճարի,
Ես հասել եմ արդեն ուղիներին ըն նոր,
Եվ նետում եմ հոգիս որպես սերմեր երգի
Այս բարգավաճ դարու ակոսներում բոլոր:

Նոյեմբեր, 1947.

Սերմերըդ հանձնիր դու հողին,
Մատներըդ երբեք չդողան.
Հարազատ հո՛ղն է բո ուղին,
Զի դավի հո՛ղը նաիրյան:

Հունձրերդ դառնան հասուն բերք,
Հասկերդ բեղո՛ւն բարձրանան,
Օրերդ լինեն խինդ ու երգ,
Օրերդ ժպտա՛ն մեծ վաղվան:

Դու լսիր զարկի՛ն մայր հողի,
Նրբ բերքըդ հնձես դու մի օր
— նա այնքան խոհուն ե՛րգ ունի:
Քո բերքում, սրտո՛ւմ բլավոր:

Սերմերդ հանձնիր դու հողին,
Մատներդ երբեք չդողան.
Հարազատ հո՛ղն է բո ուղին,
Զի դավի հո՛ղը նաիրյան:
Երևան, 1946.

Ա Շ Ո Ւ Ն

Աշունը ահա շնչում է, քայլում...
 Աշունը սիրո տե՛նդ է, եռուզեռ.
 Աշունը իր նոր մայրությա՛մբ խոհուն
 Ուզում է ասես Նաիրի՛ն հուզել

Աշունը հիմա արև ու հո՛ւշ է...
 Աշունը սրտումս մի հ'րդ է հյուսել.
 Ուզում եմ ես այդ հ'րդը մշուշի
 Անգիր, անհնչուն բառերո՞վ ասել

Օ, բերք դու առառ Նաիրյան հողի,
 Որ աշնան շնչի հե՛տ ես շնջում,
 Վերադարձը քո հարո՞ւտ թող լինի,
 Քո խինդը փովի թող ամե՛ն ինչում:

Աշունը կյանքի երթ է, եռուզեռ...
 Աշունը ահա հորդում է, խնդում,
 — Ողջո՞ւյն ձեզ հասուն Նաիրյան բերքեր,
 Ողջո՞ւյն քեզ աշուն, քո դարձին ողջո՞ւյն:
 Երևան, 1946.

Ա Մ Ա Ռ

Արեւ հրդեհ է, կրակ,
Կապույտ ու բարձր երկինք,
Սրտերը անեղր են ու տաք,
Դաշտերը բուրում են քրտինք:

Մրգեղջ կախվել են ճյուղից,
Ըղձանքով ծանրանում են ցած.
Կարծես թե արցունք են անբիծ
Մանկան ջերմ ալտերից կախված:

Սայլիչը ճշում են ցավից,
Ժամեքը և՛ խինդ են, և՛ հրգ.
Միջոցը լցվում է բույրից,
Ամառ է, հոռուհու ու բերք:

Օ, մրգե՛ր, բերքեր իմ երկրի,
Ձեզ հետ է կոմունիզմն աճում,
Նա ձեզ պես, օ՛, ամեն տարի
Դառնում է պայծառ ու հասուն:

Կգա և նա մի օր այսպես
Երգերով, բերքերով ամռան,
Կլինի մրգերի հանդես,
Կհորդի ամեն սիրտ, մառան:

Արևը հրդեհ է, կրակ,
Օրերը թռչում են անդարձ.
Իմ սիրտը կեսօր է ու տաք,
Իմ սիրտը, օ, մի՛րգ է հասած:

Երևան, 1947.

ԱՐԱՄ ԱՐՄԱՆԻ «ԵԱԶԲՈՒՌ»-ԻՆ

Այնքան հո՛ւյզ ես թաղել դու
Պստիկ, վտի՛տ այս գրքում,
Որ զգում եմ և կարդում
Ես մորմո՛քը քո հոգու...

Այնքան երա՛զ ես թաղել
Գրքիդ դալուկ էջերում,
Որ մատները քո տրտում
Քո սրտի հե՛տ են հյուծել...

Տենդից, հույզի՛ց քո սիրո
Ծղել գիշերը՝ աղջիկ.
Ոչ որ, գիշե՛րը նույնիսկ
Չեն հասկացել վիշտը քո:

Եվ թափառել ես երկար
Գիշերում մեծ քաղաքի,
Երթին, կանչի՛ն ամենքի
Դու մնացել ես օտար:

Քո մեջ կյանքն է փշրվել
Եվ մայթերի վրա թաց
Բաշխել ես սիրտըդ մարդկանց
Եվ լացըդ մորըդ պահել...

... Օ՛, հասել ես դու՝ անհուն
Կյանքին, բերքին այս դարու,
Նետած հայացքդ հեռու՝
Նոր օրերի՛ն ես ժպտում:

Անցյալըդ հո՛ւշ է եղել,
Եղել մի գիրք ըստ առաջ,
Երթով, երգո՛վ աննահանջ
Դու նոր պոետ ես դարձել:

Այնքան հույզ ես թաղել դու
Պատիկ, վտի՛տ այս գրքում,
Որ զգում եմ և կարդում
Ես մորմո՛քը ըստ հոգու:

Կարծես գիրքըդ կարդալիս
Նորից ինձ հե՛տ ես րայլում,
Իմ ականջում, ի՛մ սրտում
Քո որբությո՛ւնն ես լալիս:

Դու այնքան լաց ես եղել,
Որ «խաչքուռը» ըստ տրտում
Հին աշխարհի հի՛ն գրքում
Որպես արցո՛ւնք մնացել...
Երևան, 1946.

ԵՐԳ՝ ԱՐՈՎՔԱՆԻ ԾԱՌԵՐԻՆ

Աբովյանի ծառեր, ծառեր նուրբ ու հասուն.
 Օ՛, այնպե՛ս եք խշշում, խշշում անհուն նազով...
 Աղջիկնե՛ր եք ասես, ասես սիրուց գինով,
 Որ սրտեր եք ուղում, հուզում սրտե՛ր ձեզնով.
 Տա՛ղ եք ասում հազար, հազար ու մի խաղով,
 Եվ ամենքին կանչում, կանչում բարի ձեռքով...
 Աբովյանի ծառեր, ծառեր նուրբ ու հասուն:

Աբովյանի ծառեր, ի՛նչ եք, ի՛նչ եք պատմում
 Մի քիչ հեռու կանգնած այս մտախոհ մարդուն.
 Պատմում եք մեր կյանքի՛, մեր նոր երթի՛ մասին,
 Թե հաղթել ենք մահվան և հասել ենք լույսին,
 «Ախր», «վախր» նրա էլ հեռացան, գնացին...
 Գուր պատմում եք, պատմում փափառելո՛վ երկար
 Աղջիկների ջահել բրբիջը հո՛րդ ու վառ.
 Մանուկների անթիվ խլրտո՛ւմը վարար...
 Աբովյանի՛ ծառեր, անվերջ հարբա՛ծ ծառեր,
 Պատմում եք դուր, պատմում ինչ որ ձե՛զ է դյուրեք:

Օ՛, երեկ էր, երեկ, երբ պատմեցի ես ձեզ
 Մորմորումը սրտիս, սրտիս վե՛րքը հրկեզ.
 Օրորվեցիր խմ դեմ տրտում ու քա՛ղցր այնպես,
 Ասացիր—դու, պոետ, դու շատ ես լաց եղել
 Արևելքի այն մութ գիշերներում անտեր.
 Ճանաչել ես ամեն, ամեն հեշտանք ու սեր,
 Ոչ մեկը չի փորձել թաքուն վի՛շտը մեղմել.
 Սերերի մեջ բազում, հույզերի մեջ անեղր
 Օ՛, քեզ միայն մեր սուրբ Նաիրի՛ն է հուզել
 Եվ արդ երգըդ լինի մեր դարու պես պայծառ,
 Լինի վճիտ, հզոր ամեն, ամեն մի բառ,
 Որ կարենաս հուզել ծիլ ու ծաղիկ ու ծառ—

Աբովյանի ծառեր, ծառեր նուրբ ու հասուն.
 Օ՛, այնպե՛ս եք խշշում, խշշում անհուն նազով...
 Աղջիկնե՛ր եք ասես, ասես սիրուց գինով,
 Որ սրտեր եք ուզում, հուզում սրտե՛ր ձեզնով.
 Տա՛ղ եք ասում հաղար, հաղար ու մի խաղով,
 Եվ ամենքին կանչում, կանչում բարի ձեռքով...
 Աբովյանի ծառեր, ծառեր նուրբ ու հասուն:

Երևան, 1946.

Ի Ր Ի Կ Ն Ա Յ Ի Ն

Դաշտի վրա իջել է իրիկնային մի մշուշ,
 Իրիկնային մշուշում խոկում է հո'ղը հիմա...
 Հասկերն ասես պատմում են մոռացված քաղցր մի հուշ,
 Հասկերն այնպե՛ս են շնչում, որ երեկոն չիմանա:

Սայլերն ահա անցնում են երկաթ ու սո'ւր ճոխնշով,
 — Օ՛, մի' հուզեք, մի' հուզեք նինջը խաղա՛ղ դաշտերի—
 Հեռվից մի ե'րդ է լսվում, դառնում այնքան հե՛շտ ու զով,
 Որ հասկերին, ծիւերին անհուն օրո՛ր կլինի:

Առվի եզրին ուռիներ թախծում են խոնջ ու տրտում,
 Զուրը իր հեզ կարկաչով մի հերիա՛թ է քաղցրանուշ...
 Մեկն անծանոթ բառերով փսփսում է իմ սրտում
 «Կյանքը, բո կյա՛նքը անցյալ դարձավ երազ ու վերհուշ»:

Կատարներին սարերի արևի շո'ղը վերջին
 Ուզում է իր համբույրով ողջ հորիզո'նն հրդեհել...
 Օ՛, տունե՛րը թիչ հեռու՝ որոնց նիրհող պատերին
 Դաղջ երեկոն իր անդորրն ու մեծ խորհո'ւրդն է սփռել:

Դաշտի վերա իջել է իրիկնային մի մշուշ,
Իրիկնային մշուշում խորհում է հո՛ղը հիմա...
Հասկերն ասես պատմում են մոռացված քա՛ղցըր մի հուշ,
Հասկերն այնպե՛ս են շնչում, որ երեկոն չիմանա:

Երևան, 1946.

ԳՈՎՔ՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ

Ահա այսօր ոտներս ամուր դրած հողի՛ն հայրենական,
 Տված՝ հայացքըս արևին, և մտածումըս մեծ վաղվան,
 Իմ մեջ հուզվող երգերով նոր, սիրով անհուն, խինդով
 անհագ
 ես քեզ, ես քե՛զ եմ գովերգում, Սովետական հզո՛ր Բանակ:
 Դու մշտական արթուն պահակ, դու փրկարար ձե՛ռք
 մեծագոր,
 Դու նո՛ր խոյանք, դարերի դեմ կանգնած ահե՛ղ ռազմի
 շնչոր,
 Դու պայքարից ծնած դրո՛շ, սրբազան ուխտ, տե՛նդ
 անսպառ,
 Քեզ հաղթանա՛կը գալիքի, քեզ՝ մեր սրտե՛րը հրավառ:
 Ոսոխը հին նոր մոլուցքով զինված կանգնեց նորից
 մեր դեմ,
 Ու մռնչաց խուլ ոռնոցով այսահարի՛ պես ահագեմ...
 Ուզեց քանդել ինչ որ մարդու արդար բրտինքն էր
 կառուցել,
 Ուզեց խավար, գիշեր սփռել հայրենիքում մեր այգաբեր:

Որ չհոսեն երգերը մեր և չզնգա՛ն որպես՝ աղբյուր,
Որ Կրեմլի աստղերը վառ էլ չհուզե՛ն աստղերը բյուր,
Որ ամեն տուն լինի անեծք և սպասում մահու ճամփին,
Եվ ամեն ծիլ մեռնի դաշտում՝ չերկարած դեռ շո՛ւրթն
արևին:

Դու սլացար թշնամու դեմ ինչպես մի երթ մորկասույց,
Ղեկավարի կամբը պողպատ ձեռքերիդ մեջ արած մի թուր,
Փոթորկահույզ սի՛րտը նրա դարձավ արև՝ ու հաղթանակ
եվ շողշողաց գլխիդ վերև և բաբախե՛ց ըո կրծքի տակ:

Լեռները մեր դարձան բուռնցք, անտառները դարձան սլի՛ն,
Դետերը մեր դարձան ցասում գալարվեցին ու կանգնեցին...
Կանգնեց երկի՛րլ մեր համայն և մերկացված սրի՛ նման
իջավ գլխին ժանտ թշնամու, որ նա չենի՛, ոչ մի անգամ:

Եվ արդ վատահ ու հաղթական դու քայլում ես ապագային
Արևներով լուսավորված ստալինյան ըո մե՛ծ ուղին.
Քայլերիդ տակ չի տրորի ոչ մի ծաղիկ և ոչ մի ծառ,
Ամեն քայլիդ վա՛րդ է բացվում, ծաղկում է նոր գարուն
պայծառ:

Ահա այսօր ոտներս ամուր խրած հողի՛ն հայրենական,
Տված հայացքըս արևին, և մտածումըս մեծ վաղվան,
Իմ մեջ հուզվող երգերով նոր, սիրով անհուն, խի՛նդով
անհագ

ես բեզ, ես բե՛զ եմ գովերգում, Սովետական անպա՛րտ
Երևան, 1947. Բանակ:



Վառել ենք մենք կուռ կամքը մեր
Որպես խարո՛ւյկ հսկայական,
Որքան փշեն դաժան հողմեր
Կբորբորի՛ կրակն այնքան:

Երևան, 1947.

ԱՅՍ ՆՈՐ ՇԵՆՔԵՐԸ՝

Այս նոր շենքերը վարդապույն
Մեր հրազն են արևածին,
Որ նայում են սրտով բեղուն
Մեր պայքարին, մեր գալիքին:

Այս նոր շենքերը վարդապույն
Կյանքի կ'ըգ են և սիրո խինդ,
Ամեն մի բար ճի'գ է անհուն,
Ամեն մի բար տրոփող սի'րտ:

Այս նոր շենքերը վարդապույն
Գոհ են կյանքից մեր բազմաերթ,
Որ ապրո՞ւմ են այս աշխարհում,
Շնչում մեր վա՛ռ հույզերի հետ:

Երևան, 1947.

ԱՌԱՋԻՆ ԳԱՐՈՒՆԸ

Ես ելնում եմ իմ սարերը հայրենական,
 Թողած ետիս եռուզեռը մեծ քաղաքի,
 Կուրծքիս ներքև հազար աղբյուր զվարթաձայն,
 Չեռքերիս մեջ հազար արև, ճակտիս՝ դափնի,
 Եվ արյունիս մեջ վարարող կյա՛նը ու երազ
 Ես բարձրանում եմ Նաիրյան սարերը մեր
 Ողջունելու քեզ, գարո՛ւն իմ հավերժահարս...
 — Օ՛, քեզ ողջուն, իմ առաջին ու պայծառ սեր,
 Եկար խինդով, եկար երգո՛ւլ արևային,
 Մտար երկիր, և քանդեցիր ամե՛ն սահման
 Եվ հոռեցիր, բաշխվեցիր դու բոլորին...
 — Տես, համբույրովդ են կանաչել քարերն անդամ,
 Գետերն ահեղ բազուկներ են, որ մերկացված
 Ասես պիտի գրկեն կապո՛ւյտը երկնքի,
 Եվ արևը հողի, շողի բույրից հարբած
 Որպես մի միրգ պիտի հողի գիրկը բնկնի
 Եվ թող այսօր կարկաշը բո խող ջրերի
 Եվ ծառերիդ, ծաղիկներիդ բուրմո՛ւնքը վառ
 Որպես աղբյուր, որպես երազ ու որպես խինդ
 Սրտիս միջից հոսեն, անցնեն երթով վարար
 Եվ լիանան պանդուխտ ու ցուրտ հոգիներում:

— Գարուն, իմ սեր, բոլոր աչքերով ինձ ես նայում.
Էլ ես բռնն եմ, սրբիւր արցունքը աչքերիս...
Ես մի ճամփորդ արևելքի անապատում
Տես, թարթիչնե՛րս են այրվել ըս կարոտից,
Ես մի երաշտ ու անձրևին ծարաված հող
Տես, մնացել եմ ես ահա այսպես աշուն .
Ես մի կրգիչ դեռ երեկ մե՛ղկ ու թափառող
Նոր երգերով ահա ես բե՛զ եմ ողջունում:
Տուր երգերիս համայնական արևը ըս
Որպես գարուն, որ ես բաշխեմ բոլոր մարդկանց
Հոգ չէ, թե ես մեռնեմ, կորչե՛մ մի երեկո
Քո գրկի մեջ որպես ծաղիկ դեռ նոր ծաղկած...:

Երևան, 1947.

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅՆՐԻ ՄՈՏ

Բերել եմ ես ձեզ ողջունն ու կարոտ
 Նաիրյան երկրից
 Իմ հայրենադարձ, իմ բյուր եղբայրներ,
 Բերել եմ հոգումս մեղ արևը վառ,
 Մեր երազը ջինջ՝ բարձրացող խաղույկ,
 Բերել եմ համբույր շրթներիս վրա
 Որպես այրող բառ,
 Եվ որպես մի երգ:
 Խոսում եմ ձեզ հետ իմ երկրի դուլալ
 Ու բա՛ղցր լեզվով
 Իմ հավերժացած մեծ երկրի մասին,
 Խոսում եմ հսկա շենքերի մասին,
 Գործարանների ծխերի մասին,
 Խոսում եմ հուժկու ներկայի մասին,
 Եվ դեռ գալիքի օրերի՝ մասին,
 Պայքարի մասին մեր բրոնզապիրկ,
 Դյուղերի մասին և քաղաքների,
 Խոսում եմ բոլոր, բոլորի՝ մասին:

 Եվ ահա, ահա ձեր աչքերի մեջ
 Տեսնում եմ ես մեր Սևանը կապույտ՝
 Կապույտ մի մշուշ,

Ձեր կրծքի ներքև Ջանգո՛ւն է զնգում,
Մեր հո՛ղն է փռվիլ ձեր ոտների տակ,
Ծառերը դալար խոսում են նազով,
Հովերը մեղմիվ համբուրում են ձեր
Աչքերը խոնավ,
Հասկերը դեղձան ձեր ակնշնչում
Սեր են շնչում,
Սրեր այնպես վառվում է անվերջ
Ձեր հոգու բոլոր, բոլոր խորքերում:

Եվ վաղը, վաղը դուք կանցնիք հպառտ
Բորը Հայաստանի բորը սրտի միջից,
Եվ դաշտերը մեր
Կբուրեն անուշ որպես միրգ ու հաց,
Բարդինները մեր քա՛ղցր կիսշշան,
Գետերը ահեղ երգ կփոթորկեն,
Ջրվեժները մեր խենթորեն կերգեն
Ձեր երակների և ձեր սրտի մեջ,
Երկիրը կապույտ որպես մանկան աչք
Կբացվի խաղաղ ձեր գլխի վերև...
Հողը կբուրի ձեր թոքերի մեջ,
Աղբյուրները մեր քաղցրածայն կերգեն...
Եվ այս բոլորի, այս բոլորի մեջ
Անցյալը ձեր մութ կմեռնի խալառ
Եվ ներկան մեր մեծ պայծառ կժպտա,
Կգրկի նա ձեզ մոր կարոտանքով
Եվ կտանի ձեզ դեպի հաղթանակ:

Նվ դուք ձուլվելով մեր կյանքի երգին
Բոլոր գնդերից և բաղաճներից
Ձեր երգով, բերքով ու պայքարով ձեր
Կրայլեր դեպի դալիքը պայծառ:

Բաքումի, 1947.

ԿՈՒԽՈՋԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՆԵՐԸ

Ամառը բոլոր խնդությամբ մոտենում է դեպի ձեզ,
Օ՛, պահեստներ, մառաններ արևաբո՛ւյր իմ երկրի.
Տեսեք մեծ հյո՛ւրն է եկել ու կանգնել է ժպտեղես,
Բերքը ձեր դուռն է բախում ու կանչում է սիրով լի:

— Ահա դարձել եմ նորից, բացեք, բացե՛ք դուռը ձեր
Բերել եմ ես հողի խինդն ու լիությո՛ւնը բերրի,
Բերել եմ ես սրտերի տրոփն ու հո՛ւյզը անեղր.
Բերել եմ ես ե՛րգը մեծ համայնական դաշտերի:

Եվ դուք երգով կբացվեք ձեր սրտերի նման լայն,
Ամառն այնպե՛ս կխուժի ձեր դռներից դեպի ներս,
Որ կլցվեն, կհորդեն բերքերն ալի՛ք խնդության,
Եվ կդիզվեն, կհասնեն երգիկներին բարձրաբերձ:

... Գյուղը անձայն կննջե մանկան անուշ երազով.
Օ՛, պահեստներն են միայն—մեր հույզերը լեռնացած—
Կանգնած հսկում են անվերջ և նայում են անխռով
Գալիք ձմռան բուրբերին և օրերի՛ն ամպամած:

Երևան, 1947.

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԵՏ

Լցրած հոգիս այս գիշեր քո հուղերովը հրկեզ
 Ես անցնում եմ մայթերով այս հնամյա քաղաքի,
 Կարծես իմ դեմ ես կանգնել, կարծես շնչո՛ւմ եմ ես քեզ,
 Իմ միակ սեր, իմ երազ, քաղցրը կարո՞ւտ հայրենի:

Ահա խոսում եմ քեզ հետ իմ լեզվով մեղմ ու բուրյան
 — Դու հասկանում ես, գիտեմ, լեզունե՛րը բոլորի—
 Կարծես իմ ցա՛վն ես գգվում կարոտանքով մայրական,
 Շշնջում ես իմ սրտում ջինջ բառերը քո սրտի:

— «Այսօր դու տուն ես դարձել թողած արցունքդ
հեռու,

Մեր բորբ արև՛ն է վառել հոգու՞մդ խի՛նդ ու ամառ,
 Հուզել է ա՛կը երգիդ տքնաջան ճի՛գը դարու,
 Մեր առօրյան է բացել հսկա մի հ՛րթ քեզ համար:

Եվ բարձրացիր դու զինված երգերով նոր ու հզոր,
 Բաց են, մե՛ծ են ու անեզր ճանապարհնե՛րն իմ հրկրի,
 Քայլիր անա՛հ քայլերով, սուրա երգիդ թևերով
 Մինչև միջոց ու արև, մինչև ա՛ստղը Կրիմլի—:

Ես այս գիշեր քաղցրորեն լցրած ջիզերըս, Մոսկվա,
Ու երակներես այրող ըս հուշերովը վարար
Ձինվորի կո՛ւտ քայլերով ահա քայլում եմ վստահ
Դեպի պայքար, դեպի թե՛զ, դեպի գալի՛քը պայծառ:

Երևան, 1947.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Հողը	3
Երջանկություն	7
Սովետական Հայաստանին	8
Մութը իջած է արդեն	9
Մոսկվա	10
Զեռեր	12
Անձրե՛, անձրե	14
Զլուռ	16
Հրաժեշտ՝ պատանեկութենե մանկության	18
Վերջին սեր	19
Մեռնող եղանակ	20
Անձանոթ գինովի մը համար	21
Պայքար	22
Բեռնակիրի մահը	24
Մի արար տղայի համար	26
Դագաղակիր ֆելլաճի մասին	28
Մուրացիկ	30
Մեր դաշտերում	33
Յալեյլի	34
Շուրա Զեկալին	41

Օլիգոսթյուն Հայաստանին	48
Քերթված վաղվա համար	45
Սեկնում՝ դեպի ասիեր հայրենական	50
Սեր սիրտը բեզ	51
Ի՞նչ թափառած բոլոր...	52
Խոհ	53
Սշուն	54
Սմառ	55
Արամ Արմանի «Խաչքուռ»-ին	57
Երգ՝ Արսվյանի ծառերին	59
Իրիկնային	61
Գովք սովետական բանակին	63
Վառել ենք մենք կուռ կամբը մեր	65
Այս նոր շենքերը	66
Առաջին գարունը	67
Հայրենադարձ հայերի մոտ	69
Կոլխոզային պահեստները	72
Մոսկվայի հետ	73

Պատ. խմբագիր Գ. ԲՈՐՅԱՆ.

Տեխ. խմբագիր Ա. ՄԱՏԻՆՅԱՆ.

Կոնարու սրբագրիչ Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ.

Վ. Ֆ. 02706, Պատվեր 6, Տիրաժ 3000,
Տպ. 2,5 մամ, հեղ. 2 մամ.: Հանձնված է արտա-
դրության 10/XII 1947 թ.: Ստորադրված է տպա-
գրության 25/IV 1948 թ.:

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգր. և Հրատ.
Վարչ. № 3 տպարան, Ալավերդյան № 65





ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040570

97-62 3 40

